Միքայել Նալբանդյան

Ժ. Ժ. Ռուսոյի հիշատակին

Քեզ ոչ երբեք, Ժան-Ժակ Ռուսո,
Պիտի մոռանա աշխարհ.
Անմահ ես դու, ոգի արգո,
Թեև հազար սահի դար:

Քո երկնաշունչ մեծ գործերը
Հավիտյան պիտի ծաղկեն.
Անթառամ է քո պսակը,
Թո՛ղ ազգեր գան, թո՛ղ կորչեն:

Գիտեմ, վրադ շատ հաչեցին
Տգիտության շունները.
Քեզ շատ անգամ քարկոծեցին
Կեղծավորաց խումբերը:

Բայց դու մենա՞կ, մարդ քաջարի,
Միշտ անդողոր, անսասան,
Կանգնած նման ապառաժի՝
Ձեռք պարզեցիր մարդկության:

Եվ ցնդեցիր հազարամյա
Շղթաները ծանրացած.
Հզոր ձեռքիցդ՝ այն երկաթյա

Կապանքն ընկան փշրված . . .

Թեև այսօր պիղծ բերաններ
Ոմանք, դարձյալ քո ընդդեմ
Ոռնան ինչպես քաղցած գայլեր,
Քե՞զ ինչ . չե՞ն «արք սևադեմ»:

«Աստ հանգչում է բնության մարդը,
Մարդը և ճշմարտության» .
Ժիրարդենի գրեց ձեռքը
Տապանաքարիդ վրան:

Ծո՛ւնր եմ դնում ես այդ քարին,
Ութսուն յոթը տարուց հետ՝
Քեզ պատվում է հայի որդին .
Եվ նա՛, մա՛րդ է . վա՛րդապետ: